

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարտիչյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-719-11.02.2015-ՊԻ-010/0) վերաբերյալ:

1. Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասում լրացում կատարելու միջոցով խնամակալություն սահմանել նաև առնվազն երկու ամիս կոմայի, լեթարգիական քնի կամ վեգետատիվ վիճակի մեջ գտնվող անձանց նկատմամբ: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է խնամակալություն սահմանելու 2 հիմք՝ դատարանով քաղաքացուն անգործունակ ճանաչելը և տասնչորս տարին չլրացած անչափահասների նկատմամբ խնամակալություն սահմանելը: Ինչպես Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում են, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու հիմք է այնպիսի հոգեկան հիվանդության առկայությունը, որի հետևանքով նա չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք: Միաժամանակ պետք է նշել, որ ոչ բոլոր հոգեկան խանգարումներն են անգործունակ ճանաչելու հիմք, այլ՝ նրանք, որոնք խոչընդոտում են քաղաքացուն մասնակցել քաղաքացիական շրջանառությանը, այդ իսկ պատճառով խանգարումը պետք է լինի ոչ թե ժամանակավոր, այլ տևական, կայուն: Հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ խնամակալության սահմանումն ավելի շատ նպատակ է հետապնդում այդ անձին «պաշտպանելու» իր իսկ գործողությունների անբարենպաստ հետևանքներից, ինչպիսին կարող է լինել, օրինակ, գործարքների կնքումը:

Օրենքի նախագծով առաջարկվող կարգավորմամբ ստացվում է, որ քաղաքացու նկատմամբ սահմանվում է խնամակալություն՝ այն դեպքում, երբ առկա չեն քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված խնամակալություն սահմանելու հիմքերը: Նման պարագայում առաջանում է տվյալ անձի իրավական կարգավիճակի անհստակություն, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքով միայն քաղաքացուն անգործունակ ճանաչելու և նրա նկատմամբ խնամակալություն սահմանելու ընթացակարգը: Պարզ չէ, թե քաղաքացու նկատմամբ կոմայի մեջ գտնվելու հիմքով խնամակալություն սահմանելիս, արդյոք, նա ճանաչվում է անգործունակ, թե՞ քաղաքացուն տրվում է այլ իրավական կարգավիճակ:

Որպես օրենքի նախագծով առաջարկվող լրացման հիմնավորում՝ ներկայացվում են այն դեպքերը, երբ կոմայի մեջ գտնվող անձն ունի վարկային պարտավորություններ կամ որևէ ընկերության խոշոր բաժնետեր է: Օրենքի նախագծի տրամաբանությունից

ելնելով՝ պետք է խնամակալություն սահմանվի նաև անհայտ բացակայող քաղաքացու նկատմամբ, քանի որ քաղաքացու կողմից իր իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման անհնարինություն է առաջանում նաև քաղաքացու անհայտ բացակայելու պարագայում: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 44-րդ հոդվածը, սակայն, սահմանում է, որ դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին: Հետևաբար, ստացվում է գրեթե նույն իրավիճակը, քանի որ անհայտ բացակայող քաղաքացին ևս կարող է ունենալ վարկային պարտավորություններ, հանդիսանալ որևէ ընկերության խոշոր բաժնետեր և այլն: Քաղաքացին անհայտ բացակայող է ճանաչվում միայն դատարանի վճռով, իսկ գույքի նկատմամբ խնամակալությունը նշանակվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից՝ քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճռի հիման վրա: Կարծում ենք՝ մեկ տարի ժամկետ սահմանելը պատահական չէ, քանի որ այն նպատակ է հետապնդում պաշտպանելու անհայտ բացակայող քաղաքացու իրավունքներն ու օրինական շահերը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը որոշ դատավարական երաշխիքներ է նախատեսում այն անձանց համար, որոնց վերաբերյալ անգործունակ ճանաչելու գործ է հարուցվել: Օրենսգիրքը սահմանում է իրենց վերաբերյալ գործի քննությանը նրանց մասնակցության հնարավորությունը, ինչպես նաև դատարանի վճիռը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, ինչը չենք կարող ասել կոմայի կամ լեթարգիական քնի կամ վեգետատիվ վիճակի մեջ գտնվող մարդու վերաբերյալ, ում մասնակցությունն իր շահերի վերաբերյալ գործի քննությանը տվյալ պարագայում բացառվում է:

Հարկ է նկատի ունենալ այն, որ գոյություն ունեն «կոմա» ախտաբանական վիճակի տարբեր տարատեսակներ՝ պայմանավորված կոմայի հանգեցրած հիվանդությամբ կամ պատճառով:

Օրենքի նախագծով կարգավորված չեն այն հարցերը, թե ինչ ընթացակարգով պետք է նշված վիճակում գտնվող անձանց նկատմամբ սահմանվի խնամակալություն, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սույն օրենքի նախագծով՝ նշված վիճակում գտնվող քաղաքացիների նկատմամբ խնամակալություն սահմանելու կարգ չի նախատեսում: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ մի շարք երկրների քաղաքացիական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ խնամակալության սահմանման հիմք է հոգեկան խանգարման հետևանքով իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու անկարողությունը: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն իր՝ 2009 թվականի 1642-րդ հանձնարարականում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին կոչ է անում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության պահպանման և նրանց կողմից որոշումներ ընդունելու իրավունքի սահմանափակման անթույլատրելիությունը:

Գործունակության սահմանափակման անթույլատրելիության միտում է նկատվում մի շարք երկրներում: Մասնավորապես, Չեխիայի Հանրապետության նոր քաղաքացիական օրենսգիրքը, որն ընդունվել է 2012 թվականի փետրվարի 3-ին, սահմանում է, որ անձին այլևս հնարավոր չէ գրկել գործունակությունից. սահմանվում է, այսպես կոչված, աջակցողի միջոցով որոշում ընդունելու մեխանիզմը՝ որպես խնամակալության համակարգին փոխարինող:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում ենք, որ նշված լրացումները կատարելու անհրաժեշտություն չկա:

2. Օրենքի նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 970-րդ հոդվածում կատարել համապատասխան լրացում և սահմանել, որ համալիր թույլտվության պայմանագրի (Ֆրանչայզինգի) գրանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Չառարկելով առաջարկությանը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ գրանցման պահանջը պետք է լինի կողմերից մեկի պահանջով: Այդ կապակցությամբ առաջարկում ենք քննարկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 970-րդ հոդվածով նախատեսված համալիր թույլտվության պայմանագրի գրանցման ինպերատիվ պահանջի վերանայման հարցը:

3. Օրենքի նախագծում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**:

**ՀԱԿԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով առաջարկվում է << կառավարությանը վերապահել համալիր թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագրի գրանցման կարգի սահմանումը, ինչպես նաև ամրագրվում են առնվազն երկու ամիս կոմայի, լեթարգիական քնի կամ վեգետարիվ վիճակի մեջ գտնվող անձանց նկատմամբ խնամակալություն սահմանելու հիմքերը և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ նախատեսվում է կատարել որոշ փոփոխություններ, մասնավորապես՝ առաջարկվում է սահմանել, որ անձի կողմից երկու ամսից ավելի կոմայի կամ լեթարգիական քնի մեջ գտնվելու դեպքում նրա նկատմամբ նշանակվում է խնամակալություն:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է՝

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 4-րդ հոդվածը համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրությանը,

- կարգավորել կոմայի, լեթարգիական քնի և վեգետատիվ վիճակի մեջ հայտնված քաղաքացիների նկատմամբ խնամակալության սահմանման և դրա դադարման հետ կապված հարաբերությունները,

- տարընթերցումներից խուսափելու նպատակով՝ օրենսգրքի 305-րդ հոդվածում «անվավեր» բառը փոխարինել «վիճահարույց» բառով,

- համալիր թույլտվության պայմանագրի գրանցման կարգի սահմանման լիազորությունը վերապահել ՀՀ կառավարությանը:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ Նախագծի ընդունումն ինչպես ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի, այնպես էլ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-719-11.02.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 4-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեյալ բովանդակությամբ.

«1. Խնամակալություն սահմանվում է տասնչորս տարին չլրացած անչափահասների, հոգեկան խանգարման հետեանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների, ինչպես նաև առնվազն երկու ամիս կոմայի, լեթարգիական քնի կամ վեգետատիվ վիճակի մեջ գտնվող անձանց նկատմամբ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեյալ բովանդակությամբ.

«1. Չափահաս քաղաքացիների նկատմամբ խնամակալությունը եւ հոգաբարձությունը դադարում են խնամակալի, հոգաբարձուի կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու, նրա գործունակության սահմանափակումները վերացնելու մասին դատարանի վճռով, կոմայից, լեթարգիական քնից արթնանալու կամ վեգետատիվ վիճակից դուրս գալու փաստի ուժով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 305-րդ հոդվածում «անվավեր» բառը փոխարինել «վիճահարույց» բառով:

Հոդված 5. Օրենսգրքի 970-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ՝ հետեյալ բովանդակությամբ.

«Համալիր թույլտվության պայմանագրի գրանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է համալիր թույլտվության պայմանագրի գրանցման կարգը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. Հայաստանի Հանրապետության 1995թ. խմբագրությամբ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսվում էր. «*Կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Ազգային ժողովը կարող է լիազորել կառավարությանը՝ ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործում են Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում և չեն կարող հակասել օրենքներին:*»:

Այդ որոշումներն ստորագրում է Հանրապետության Նախագահը:» Սահմանադրության 2005թ. խմբագրությամբ այդ հոդվածը հանվեց, ինչն իրավական տեսանկյունից ճիշտ ու հիմնավորված որոշում էր, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ քաղաքացիական օրենսգրք) 4-րդ հոդվածի 1-ին մասում խմբագրում չկատարվեց, և այժմ խնդրո առարկա նորմը հակասում է գործող Սահմանադրությանը՝ չնայած նրան, որ այն, ըստ էության, այլևս չի կարող կիրառվել:

2. Քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ *քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն: Անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը:* Այսինքն, խնամակալությունը սահմանվում է անգործունակ անձանց նկատմամբ, իսկ անգործունակ ճանաչվում են այնպիսի հոգեկան խանգարում ունեցող քաղաքացիները, ովքեր այդ խանգարման հետևանքով ընդունակ չեն հասկանալ իրենց գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք: Այսպիսով կոմայի, լեթարգիական քնի կամ վեգետատիվ վիճակի մեջ հայտնված քաղաքացիների նկատմամբ խնամակալություն սահմանվել չի կարող, քանի որ դրանք հոգեկան խանգարումներ չեն համարվում: Այնինչ, այս անձանց նկատմամբ անհրաժեշտ է սահմանել խնամակալություն, քանի որ այդ ռեժիմով է հնարավոր գործարքներ կնքել նրանց անունից և ի շահ նրանց՝ պահպանելով 39-42-րդ հոդվածներով սահմանված իրավական ռեժիմը:

Այսպես օրինակ, անձն ունի վարկային պարտավորություններ, որոնք կոմայի մեջ գտնվելու հետևանքով բնականաբար մարել չի կարող: Սակայն այդ պարտավորությունը չի դադարում նրա կոմայի մեջ լինելու հանգամանքի ուժով, ոչ էլ կարող է ժառանգության կարգով փոխանցվել, քանի որ անձը չի մահացել կամ մահացած չի ճանաչվել: Այսպիսով, եթե օրինակ տվյալ անձի ամուսինը կամ այլ անձ չմարի այդ պարտավորությունը, ինչն անելու համար հնարավոր է, որ անհրաժեշտ լինի տնօրինել համատեղ սեփականություն հանդիսացող գույքը, ինչն առանց մյուս ամուսնու համաձայնության հնարավոր չէ իրականացնել, ապա վարկային պարտավորության նկատմամբ որպես տույժ հաշվեգրվելու են տոկոսներ, որոնք անձը պետք է մարի արժանաչալուց հետո, քանի որ կոմայի մեջ գտնվող պարտապանի նկատմամբ իմաստագուրկ է հայց հարուցել՝ այն պարզ պատճառով, որ այս դեպքում հնարավոր չէ պատշաճ ծանուցում ապահովել:

Մեկ այլ դեպքում անձը որևէ ընկերությունում խոշոր բաժնետեր է, և նրա ձայնն անհրաժեշտ է ընկերության համար կարևոր գործարք կնքելու կամ նմանաբնույթ այլ նպատակի համար, սակայն քանի որ նա անձամբ պետք է քվեարկի, իսկ նման հնարավորություն փաստորեն չկա, ապա ընկերության համար տվյալ անձի երկար ժամանակով կոմայի մեջ գտնվելը կարող է անդառնալի հետևանքների հանգեցնել: Նույնկերպ, հնարավոր չի լինելու հոգալ տվյալ անձի բուժման և հիվանդանոցային այլ ծախսերը, եթե նա եղել է ընտանիքի հիմնական ֆինանսական մուտքերն ապահովողը:

Այսպիսով, մեր կողմից առաջարկվում է սահմանել, որ անձի կողմից 2 ամսից ավելի կոմայի կամ լեթարգիական քնի մեջ գտնվելու դեպքում նրա նկատմամբ նշանակվում է խնամակալություն, ինչը հնարավորություն կտա կառավարել նրա միջոցները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գույքի նկատմամբ նշանակել հավատարմագրային կառավարիչ:

3. Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի՝ *գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առ ոչինչ գործարք):* Այսպիսով՝ օրենսգրքով սահմանվում է անվավեր գործարքի (ռուս.՝ недействительная сделка) 2 տեսակ՝ առ ոչինչ (ռուս.՝ ничтожная сделка, օրենքով ուղղակիորեն սահմանվում է որոշակի գործարքի վավերության

կոնկրետ պայման(ներ)ի խախտման հետևանքով գործարքի առոչնչություն) և վիճահարույց (ռուս.՝ оспори́мая сделка, տվյալ դեպքում գործարքն անվավեր է ճանաչվում դատական ակտի հիման վրա՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում՝ բացառությամբ եթե ուղղակիորեն չի սահմանվում, որ տվյալ խախտման դեպքում գործարքն առ ոչինչ է):

Այնինչ, 305-րդ հոդվածում նշվում է, որ *օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առ ոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ*: Նշված դրույթների տառացի մեկնաբանությունից ստացվում է, որ օրենքով սահմանվում է անվավեր գործարքների ոչ թե 2, այլ 3 տեսակ՝ առ ոչինչ, վիճահարույց և անվավեր: Սակայն ակնհայտ է, որ 305-րդ հոդվածում նշվող «օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող անվավեր» գործարքը հենց 303-րդ հոդվածի 1-ին մասում բացահայտվող վիճահարույց գործարքն է, որի անվավերությունը ճանաչվում է քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից կայացվող ակտի ուժով: Տվյալ իրավակարգավորումը կարող է տարրնթերցումների տեղիք տալ. այսպես, համաձայն օրենսգրքի 878-րդ հոդվածի 3-րդ մասի՝ *գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության*: Նման պայմանագիրն առոչնչ է: Եթե մեկնաբանեն 305-րդ հոդվածի գործող խմբագրության լույսի ներքո, ապա ստացվում է, որ փոխառության պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է միաժամանակ 2 իրավական հետևանքի՝ անվավերության և առոչնչության, սակայն փաստ է, որ անվավերությունը դա ընդհանուր հասկացությունն է, իսկ առ ոչնչությունը՝ դրա տարատեսակը:

Հարկ է նաև նշել, որ մեր քաղաքացիական օրենսգիրքը ժամանակին թարգմանվել է ԱՊՀ մոդելային քաղաքացիական օրենսգրքից, և 305-րդ հոդվածը համապատասխանում է մոդելային օրենսգրքի 167-րդ հոդվածին: Սակայն այստեղ հավանաբար տեղի է ունեցել ոչ ճշգրիտ թարգմանություն, ինչի հետևանքով որոշակի իրավական անհստակություն է առաջացել գործարքների անվավերության ինստիտուտում:

Այսպիսով, անհրաժեշտ է օրենսգրքի 305-րդ հոդվածում «անվավեր» բառը փոխարինել «վիճահարույց» բառով՝ հոդվածի սահմանումները կարգավորելու համար:

4. Գործող քաղաքացիական օրենսդրությունը սահմանում է որոշակի ընդհանրություններ ունեցող պայմանագրերի 2 տեսակ՝ համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագիր (ֆրանչայզինգ, հոդված 969) և լիցենզային պայմանագիր (հոդված 1106): Այս երկու պայմանագրերի հիմնական տարբերությունը հանգում է հետևյալին. ըստ 1106-րդ հոդվածի 1-ին մասի՝ *լիցենզային պայմանագրով մտավոր գործունեության արդյունքի կամ անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կողմը (լիցենզատուն) մյուս կողմին (լիցենզառուին) թույլատրում է օգտագործել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտը*: Այսինքն, լիցենզային պայմանագրով լիցենզատուն կարող է լիցենզառուին փոխանցել մտավոր գործունեության ընդամենը մեկ արդյունքի կամ անհատականացման մեկ միջոցի նկատմամբ օգտագործման իրավունքը, այնինչ ֆրանչայզինգի դեպքում նման սահմանափակում չկա:

Խնդիրն այն է, որ օրենսգիրքը չի սահմանել ֆրանչայզինգի պայմանագրի գրանցման կարգ, ոչ էլ հղում է կատարել, որ այդ կարգը կարող է սահմանվել ենթաօրենսդրական ակտերով: Այսպիսով, ունենք իրավիճակ, որտեղ անձիք, ցանկանալով կնքել ֆրանչայզինգի պայմանագիր և չկարողանալով գրանցել այդ պայմանագիրը՝ համաձայն 970-րդ հոդվածի 2-րդ մասի, մեկ ֆրանչայզինգի պայմանագրի փոխարեն ստիպված են կնքել մի քանի լիցենզային պայմանագրեր: Ռուսաստանի Դաշնությունում այդ խնդիրը վաղուց լուծվել է (Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 54-րդ գլուխ՝ առևտրային կոնցեսիա), քանի որ 20-րդ դարի 90-ական թվականներից այնտեղ բազմաթիվ կազմակերպություններ ցանկանում էին հիմնել իրենց ֆրանչայզինգային կառույցները: Այնտեղ առևտրային

կոնցեսիայի պայմանագրերը գրանցում է «Ռուսպատենտը»¹, ինչը կարգավորվում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1028-րդ հոդվածի 2-րդ մասի և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի ուժով:
Այսպիսով, ներկայացված նախագծով առաջարկվում է կառավարությանը վերապահել ֆրանչայզինգի պայմանագրի գրանցման կարգի սահմանումը, ինչը հնարավոր կդարձնի այդ տեսակի պայմանագրերի կնքումը Հայաստանում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնտեսվարող սուբյեկտների համար, իսկ քաղաքացիական օրենսգրքի 53-րդ գլուխն այլևս ձևական բնույթ չի կրի:

1 <http://www.rupto.ru/rupto/portal/3b9e1b73-3ee0-11e2-7d07-9c8e9921fb2c>

<http://www.rupto.ru/activities/licenses>

http://www.rupto.ru/docs/regulations/O_reg_dog_opredostavl_prava_na_izobretenie